ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի որակավորման
հանձնաժողովի 30.09.2026թ. N 6-Լ որոշման

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ ԱՎԱՐՏԱԾ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. 2026 թվականի երկրորդ կիսամյակի որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերը ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրները կարող են ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատ **2026թ. հոկտեմբերի 10-ից մինչև 2026թ. հոկտեմբերի 22-ը (ներառյալ)՝** ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին): Փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 30-րդ կետով (www.advocates.am, Պալատ -> Որակավորման հանձնաժողով):
2. Ներկայացված փաստաթղթերի և տվյալների հավաստիության ստուգումը ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմակերպում է փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի հաջորդ օրվանից հաշված 5 (հինգ) օրվա ընթացքում:
3. Որակավորման քննությունների **առաջին փուլն** անցկացվելու է **ք.Երևան, Զաքյան 7-3** հասցեում (ՀՀ փաստաբանական ակադեմիայի լսարաններում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև 4-րդ հարկի դահլիճում), իսկ **երկրորդ փուլը՝** ՀՀ փաստաբանների պալատում (**ք.Երևան, Զաքյան 7-2** հասցեում):
4. ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած քաղաքացիաիրավական և վարչական ուղղվածության ունկնդիրների որակավորման քննության առաջին փուլն անցկացվելու է **03.11.2026թ. (ժամը 09.00-ից)** և **05.11.2026թ (ժամը 09.00-ից):** ՈՒնկնդիրները որակավորման քննության օրվա (03.11.2026թ. կամ 05.11.2026թ.) մասին կծանուցվեն քննություններին մասնակցելու համար ներկայացված դիմումներում նշված էլեկտրոնային փոստի միջոցով:
(կետը փոփոխվել է որակավորման հանձնաժողովի 16.10.2026թ. թիվ 8-Լ որոշմամբ):
5. ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած քրեական ուղղվածության ունկնդիրների որակավորման քննության առաջին փուլն անցկացվելու է **04.11.2026թ. (ժամը 09.00-ից)** և **05.11.2026թ. (ժամը 09.00-ից):** ՈՒնկնդիրները որակավորման քննության օրվա (04.11.2026թ. կամ

05.11.2026թ.) մասին կծանուցվեն քննություններին մասնակցելու համար ներկայացված դիմումներում նշված էլեկտրոնային փոստի միջոցով:
(Կետը փոփոխվել է որակավորման հանձնաժողովի 16.10.2026թ. թիվ 8-Լ որոշմամբ):

6. Առաջին փուլի քննությանը մասնակցելու համար հավակնորդները պետք է ներկայանան և գրանցվեն քննության օրը՝ ժամը **08^{00}-ից** մինչև **08^{45}**՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:
7. ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած քաղաքացիաիրավական և վարչական ուղղվածության ունկնդիրների որակավորման քննության երկրորդ փուլն անցկացվելու է **18.11.2026թ-ին ժամը 09.00-ից:**
8. ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած քրեաիրավական ուղղվածության ունկնդիրների որակավորման քննության երկրորդ փուլն անցկացվելու է **19.11.2026թ-ին ժամը 09.00-ից:**
9. Երկրորդ փուլին մասնակցելու համար հավակնորդը պետք է ներկայանա ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի կողմից էլեկտրոնային փոստով կամ այլ եղանակով ծանուցված օրը և ժամին՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ: **Երկրորդ փուլին կարող է մասնակցել առաջին փուլը հաղթահարած հավակնորդը:**